

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 18-ի N 946 - Ն որոշման

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 11-ի N 1504 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 20.1-ին հոդվածին համապատասխան հարկային հաշիվների չեղյալ ճանաչման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում «ապրանքների մատակարարում», «ծառայությունների մատուցում», «գործարք» հասկացությունները կիրառվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառված իմաստով, իսկ «կնքված պայմանագիր» հասկացությունը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (մասնավորապես՝ օրենսգրքի 436-րդ, 448-րդ հոդվածներով) սահմանված իմաստով՝ անկախ կնքման ձևից (օրինակ՝ բանավոր):

3. Սույն որոշմամբ սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվները կարող են հարկային հաշիվ դուրս գրող անձի կողմից չեղյալ ճանաչվել սույն կարգին համապատասխան՝ սխալներով լրացված լինելու դեպքում: Սույն կարգի իմաստով հարկային հաշվի սխալներով լրացված լինելու հիմքերն են՝

1) ապրանքներն առաքվել (ծառայությունները մատուցվել) են գնորդին, սակայն հարկային հաշիվը դուրս է գրվել այլ անձի անունով.

2) ապրանքների մատակարարմանը (ծառայությունների մատուցմանը) վերաբերող հարկային հաշիվը լրացվել է սխալներով, որոնք կարող են այն դուրս գրողի կամ ստացողի

համար իրավական կամ ֆինանսական հետևանքներ առաջացնել (օրինակ՝ տուգանք, ծախսագրման կամ հաշվանցման արգելք)։

3) հարկային հաշվով մատակարարվող ապրանքի (մատուցվող ծառայության) ընդհանուր արժեքի հաշվարկմանը մասնակցող որևէ տվյալ (քանակ (ծավալ), գին, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկի դրույքաչափ կամ ավելացված արժեքի հարկի գումար) լրացվել է սխալ։

4. Մխալներով լրացված և դուրս գրված հարկային հաշիվը չեղյալ է ճանաչվում ինտերնետային կապի միջոցով հարկային հաշիվների դուրսգրման ծրագրի միջոցով կիրառելով ծրագրի համապատասխան ֆունկցիան։ Տվյալ դեպքում հարկային հաշվի թղթային տարբերակի վրա դուրս գրողի կողմից սույն կարգի 3-րդ կետում նշված հարկային հաշիվը չեղյալ ճանաչելու հիմքի (պատճառի) վերաբերյալ գրառում է կատարվում։ Ընդ որում, եթե չեղյալ ճանաչելու պահին հարկային հաշիվը վավերացված է տվյալ հարկային հաշվով ապրանք ձեռք բերողի կամ ծառայություն ստացողի էլեկտրոնային ստորագրությամբ, ապա այդ գրառումը ստորագրվում է նաև ստացողի կողմից։ Հարկային հաշվի լրացման հետ կապված այն դեպքերում, երբ ապրանքներն առաքվել են գնորդին կամ ծառայությունները մատուցվել են ստացողին, սակայն հարկային հաշիվը դուրս է գրվել այլ անձի անունով, հարկային հաշիվը չեղյալ է ճանաչվում, եթե հարկային հաշվի թղթային տարբերակի վրա առկա է ապրանքներ ձեռք չբերելու կամ ծառայություններ չստանալու վերաբերյալ այն անձի ստորագրությամբ գրառումը, ում անունով դուրս է գրվել հարկային հաշիվը։ Սույն կետով սահմանված կարգով հարկային հաշիվը չեղյալ է ճանաչվում հիմքերից որևէ մեկն առաջանալու օրվան հաջորդող մինչև 15-րդ օրը։

5. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածին համապատասխան, տնտեսավարող սուբյեկտի գործունեության կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված, հարկային հաշիվը նախօրոք դուրս գրվելու դեպքում (պայմանով, որ ապրանքները պետք է մատակարարվեն կամ ծառայու-

թյունները պետք է մատուցվեն հարկային հաշվում նշված համապատասխան օրը) հարկային հաշիվը չեղյալ է ճանաչվում սույն կարգի 4-րդ կետի պայմանների պահպանման դեպքում:

6. Այն դեպքում, երբ սույն կարգի 3-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկն հայտնի է դարձել սույն կարգի 4-րդ կետով նախատեսված ժամկետից հետո, ապա սույն կարգի 4-րդ կետի պահանջների պահպանմամբ հարկային հաշիվը չեղյալ ճանաչվելու դեպքում հարկային հաշվի վրա նշվում է նաև հարկային հաշվի չեղյալ ճանաչման հիմքը հայտնի դառնալու ամսաթիվը, ամիսը և տարեթիվը:

7. Այն գործարքների գծով դուրս գրված հարկային հաշիվները, որոնց մասով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ իրավական այլ ակտերով հարկային հաշիվներ դուրս չեն գրվում, չեղյալ չեն ճանաչվում: Նշված դեպքում հարկ վճարողը չի ազատվում դուրս գրված հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարն օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու պարտավորությունից, եթե գործարքը կատարվել է:

8. Սույն կարգին համապատասխան՝ անմիջականորեն հարկային հաշիվներ դուրս գրած անձի (հանձնակատարի, գործակալի, համատեղ գործունեության մասնակցի) կողմից չեղյալ են ճանաչվում նաև հանձնարարողի, պրինցիպալի կամ հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնած անձի անունից դուրս գրված հարկային հաշիվները:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ